տորին, պրասին, բակլային և ուրիշ հնտեղէններուն գինը, որ 1600 տաղանդ է եղեր որ 14,400,000 դահեկան կ՚ընէ ։

Ինգղիա ալ հաշիւ մը ըրեր են՝ որ մեծ բուրգը շինելու համար պէտք է որ քսան տարի 100,000 մարդ աշխատի · բայց թէ որ շոգեշարժ մեքենայ գործածելով 36,000 մարդ աշխատին, քանի մը օրուան մէջ քարերը կտրելէն ետև՝ տասնըութը ժամուան մէջ կրնան լմնցընել կ՚ըսեն ։ Կ՚արժէ որ աս հռչակաւոր շէնքերուն ստորագրութիւնը Տըլիլ բանաստեղծին աս գեղեցիկ խօսքերովը լմնցընենք ·

Ո՛Վ վեհ արձանք Նեղոսի, շքեղ տաճարք տըխրութեան,
Զիմըդ 'ի ձեր գագաթունս յառեալ պարծին աչք մարդկան։
Ձերոց գոռոզ ճակատուց լերինք ցածնուն առաջի,
Ստուերքդ անձոանիք երկայնին 'ի բացարձակ 'ի դաշտի ·
Այլ մահացու մարդ տըկար զձեր պատրաստեաց ըղձընունդ,
Նոյն եւ կենցաղ ձեզ անվերջ, զանմահութիւն անկապուտ։
Քանզի 'ի լայն ձեր յոտին՝ նըստեալ 'ի խոր լռութեան,
Ձայն արձակեմ շուրջ ըզձեզ առ շեղջաշեղջն այն խուժան
Ազգաց ու ազանց խուռներամ և դիւցազանց քաջայաղթ,
Զորս ուխք տարան վարեցին 'ի վեհ դարուց յորձնեռանդ ·
Արքայք և պերճ ըռնակալք, ամիրապետք և [illegible]
Տոհմք և սերունդք յոգնաթիւ, քաղաքանին և աւանք ·
Անուանք երբեմն ահագինք՝ ցընորք են այժմ ուրուական ·
Դուք և դարուց կայք գիւանք, և արքայից գերեզման ·
Դուք գիտութեան գանձարանք, կրօնից և հին բարբառոյ,
Ի հիացումն, յառեղծուած, 'ի խըրատ բարեաց իմաստնոյ։
Ընկալարդ զայս իմ նուէր, ով որ 'ի գաստ քո հըզօր
Ի վէմ նոցին հաստաբեստ՝ քան ըզպըղինձ կարծրակուռ
Քանդակեցեր զիմ ըզտաղս։ Անցէք շըրջանք անհամար,
Ծընունդք ազգաց և իշխանք, անցէք անցէք ստուերաբար ·
Պարիսպս է իմ մըցանակ · և յաղթական արկածին,
Աւեմ և ես անվեհեր · « կեցցեն իմ տաղք, մի մեռցին »։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԶՈՒԱՐՃԱԼԻ ԴԻՊՈՒԱԾՆԵՐ

Անամօթութիւններ ։

ՄԻԱՄԻՏ մարդուն մէկը տեսնելով որ մկները իրեն դաշտը կ՚աւրըշտըկեն, բոլոր դաշտը քարայատակ ընել տուեր է ։ — Տեսեր է որ վառարանը այնչափ մօտ է իրեն որ գիմացը նստած ատենը ոտուըները խիստ կը տաքնան, քակել տուեր է վառարանն ու աւելի հեռուն շինել տուեր է ։ — Ուրիշ մը գլխուն տակը բարձի տեղ հողէ պնակ մը դրեր է եղեր · տեսնելով որ շատ կարծր է, մէջը յարդ լեցուցեր է ։ — Խելօք Դուլթին տուած խրատներուն կընմանին աս միամտութիւնները ։

Յանցանքը ճանչնալուն օգուտը ։

ՕՍՍՈՆԻ դուքսը օր մը նաւարանը կ՚երթայ · օրն ալ այնպիսի տօներէն մէկն է եղեր որ ինքը իրաւունք ունէր ան օրը մէկ դատապարտեալ մը ազատելու ։ Քանի հոգւոյ որ հարցուցեր է թէ քու յանցանքդ ինչ է, ամէնքն ալ նայեր են որ իրենք զիրենք սուտումուտ պատճառներով արդարացընեն · միայն մէկը ելեր է շտկէ շիտակ պատմեր է իր յանցանքը ։ Դուքսը մէկէն կը զուրցէ քովիններուն · " Հանէք վերուցէք շուտ մը աս չարագործը աս տեղէս · թէ որ քիչ մը ատեն ալ աս անմեղներուն մէջ կենայ՝ զամէնքը կ՚աւրէ "։

Շողոքորթը ։

ԲԻԱՍ անունով յոյն փիլիսոփային կը հարցընեն թէ ամենէն վտանգաւոր ու վախնալու կենդանին որն է ։ Պատասխան կուտայ թէ " Վայրենի կենդանեաց մէջ բռնաւորն է · ընտանիներուն մէջ շողոքորթը "։